տուցուեցաւ ի Ս. Յարութիւն, վերնատան մեր մատրան մէջ։ Պատարագիչն էր Հոգ. Տ. Նոբայր Վրդ. Պօղարեան։

✱ 21 Դեկտ. Դշ.— Յետ երեկոյեան ժամ մերգութեան, կատարուեցաւ վաղուան տօնին նախատօնակը, Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, հանդիսապետութեամբ Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհանեանի։

✱ 22 Դեկտ. Եշ.— Յարութիւն Ս. Առաքելաժանի ի յԱռնայէ.— Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհանեանի նախագահութեամբ, վարդապետ հայրեր հանդիսական թափօրով Առաջնորդ իշան Գեթսեմանիի Ս. Առաքելաժանի Տաճարը։ Հրաշափառ հանդիսաւոր մուտքէն յետոյ Սուրբ Պատարագը մատուցուեցաւ Ս. Գոյսի գերեզմանին վրայ։ Պատարագեց և քարոզեց Հոգ. Տ. Պարգև Վրդ. Վրթանէսեան բնաբան ունենալով «Երկնեալ ես դու ի կանայս և օրհնեալ է պտուղ որովայնի քո» (Ղկ. Ա. 42-43)։ Յոյժ տուռ Ս. Առաքելաժանի դերը իբրև միջնորդ և բարեխօս։ Շեշտեց նաև թէ Ս. Կոյսի մեծութիւնը պէտք է փնտռել անոր հաւատարմութեան, հնազանդութեան և խոնարհութեան մէջ։

Կէսօրին ի դիմաց Գեր. Տեղապահ Հօր, Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհանեան Հոթել Ազահրայի մէջ ներկայ գտնուեցաւ երուսաղէմի քաղաքապետարանին կողմէ ի պատիւ Ն. Վ. Ապոստոլ Թագաւորին տրուած ճաշկերոյթին։

ՆՕԹՔ ԵՒ ՆԻՇՔ

Պատասխանելով Գոյմաքա շաբաթաթերթի հարցապնդումին, թէ «ինչո՞ւ համար Երուսաղէմի Հոգեղոյս Պատրիարքի մանուան եւ Պատրիարքական Տեղապահի ընտրութեան լուրերը, իբր թէ, չեն հաղորդուած Իրագի Հայոց Առաջնորդարանը»:

Հրապարակաւ եւ յարգանքով կուգանք յայտարարելու թէ վերոյիշեալ երկու պարագաներուն ալ, ուրիշներու կարգին տեղեակ պահած ենք նաեւ Իրագի Հայոց թեմը: Մանաւանդ գոյժը թէ Գեր. Տ. Սուրէն Սրբազանին եւ թէ Արժանապատիւ Տ. Գրիգոր Քահանային հաղորդուած է Գէյրութէն, Սոքոնի Վրդ. Տէրտէրեանի միջոցաւ, իսկ Տեղապահութեան ընտրութեան լուրը Երուսաղէմէն: Կրնամ այս մասին հարցնել Անթիլիաս՝ Գր. Խորէն Գաբիկեանին, եւ Ս. Աթոռ՝ Գր. Կարապետ Յակոբեանին:

Հետեւաբար կը զարմանանք Գոյմաքա շաբաթաթերթի Պաս. խմբագրութեան այս հարցապնդումին եւ վրդովումին համար:

Ուրեմն՝ Երուսաղէմի Պատրիարքարանը կրնա՞ք երեւակայել թէ կրնար ուրեւ պատեհ ունենալ այլապէս շարժելու, այս ալ մեր զարմանքը Գոյմաքա-ի Պաս. խմբագրութեան:

ԽՄԲ.

Շնորհակալութեամբ կ'արձանագրենք թէ Ամերիկայէն Ազն. Տիկին Ռ. Տաղուրեան եւ Տիար Ա. Սազբնեան հինգական տոլար կը նուիրեն վասն բարգաւանման ՍԻՈՆ-ի:

Վարչութիւն ՍԻՈՆ Ամսագրի